Պապիկի կատարյալ տարեդարձը

Իսկ եթե անձրևը չդադարի՞:

ԵՐԲԵՄՆ ԱՆՁՐԵՎԸ ՉԻ ԴԱԴԱՐՈՒՄ:
Ոչ բոլոր աղոթքներն են անմիջապես պատասխան ստանում, ինչպես Ալեքսի աղոթքը: Բայց Աստված միշտ լսում է և սիրում է օրհնել մեզ: Մենք կարող ենք վստահել, որ Նա գիտի, թե որն է լավագույնը, նույնիսկ, երբ թվում է, թե ամեն ինչ ճիշտ չի ընթանում:



Դեյվիդ Դիքսոն
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Սամոայում:

Ուութ, մռայլ ամպեր էին կախված երկնքում: Ալեքսը նայեց դրանց:

ԲՈՒՄ, -

եղավ հերթական որոտի ձայնը: Ամենուր անձրևի մեծ, հորդառատ կաթիլներ տեղացին:

Ալեքսը տարուբերեց գլուխը: Դա լավ չէր: Բնավ լավ չէր: Երբեմն Սամոայում կարող էր օրեր շարունակ անձրևել՝ առանց դադարի: Բայց նա ուզում էր, որ իր պապիկի ծննդյան օրը կատարյալ լիներ:

Ալեքսը գնաց իր սենյակ և ծնկի իջավ անկողնու մոտ:

«Սիրելի Երկնային Հայր»,- ասաց նա: «Խնդրում եմ, այնպես արա, որ վաղը՝ պապիկիս տարեդարձին, անձրևը դադարի: Մենք արդեն ուղարկել ենք հրավիրատոմսերը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»:

Երբ Ալեքսը ոտքի կանգնեց, տեսավ մայրիկին ու հայրիկին՝ կանգնած իր դռան մոտ: Նրանք ժպտում էին:

«Հուսով եմ՝ դեմ չէիր, որ մենք լսեցինք քո աղոթքը», - ասաց մայրիկը:

Ալեքսը ժպտաց: «Ոչինչ: Ես պարզապես ուզում եմ, որ վաղը հատուկ օր լինի պապիկի համար: Լավ չի լինի, եթե անհրաժեշտ լինի ներսում մնալ: Մենք պարելու տեղ չենք ունենա»:

Հայրիկը սեղմեց Ալեքսի ուսը: «Անկախ եղանակից՝ պապիկը կզգա, թե որքան ես դու սիրում իրեն»:

Հաջորդ առավոտյան մայրիկն ու հայրիկը խնդրեցին Ալեքսին ասել ընտանեկան աղոթքը: *Դեռ* հորդառատ անձրև էր գալիս: Եվ *դեռ* չէր երևում, որ այն դադարելու է:

«Խնդրում ենք, օրհնիր այս անձրևը, որ այն դադարի երեկույթի ժամանակ», - ասաց նա: «Եվ խնդրում ենք օրհնիր մեզ բոլորիս, որ լավ ժամանակ անցկացնենք: Հատկապես՝ պապիկս»:

ՆԿԱՐԵՐԸ՝ ԱՌԻԳՈՆՍՈ ԶԱՄԲՈՒՏՅՈՆԻ

Ալեքսն ամբողջ առավոտ նայել էր երկնքին: Երկար ժամանակ ոչինչ չէր փոխվում: Բայց հետո մի զարմանալի բան տեղի ունեցավ:

«Նայեք», - բղավեց Ալեքսը: «Կապույտ երկնքի մի կտոր հայտնվեց»: Նրա ընտանիքը դուրս վազեց բակ: Ամպերը հետզհետե հեռանում էին:

Մի քանի ժամից բոլոր ամպերը հեռացան: Նույնիսկ գետնի ջրափոսերն էին չորացել: Ալեքսը շտապեց դուրս՝ բակը զարդարելու: Շուտով այդտեղ էին գալու պապիկն ու մյուս հյուրերը:

Երբ պապիկը եկավ, շատ զարմացավ: Նա տեսավ լույսերը, գույնզգույն հոսքագծերը և բոլոր հյուրերին: «Ամեն ինչ շատ գեղեցիկ է»,- ասաց նա: «Անչափ շնորհակալ եմ»:

Երեկույթը հենց այնպիսին էր, ինչպես Ալեքսն էր ուզում: Նրանք պարում էին պապիկի սիրելի երգերի ներքո: Ուտելիքը համեղ էր, հատկապես կոկոսով քաղցր հացը: Ալեքսը նույնիսկ երգեց պապիկի հետ:

Երեկույթի լավագույն մասը, իհարկե, Siva Taualuga-ի պահն էր: Այդ պարը միշտ կատարում էր օրվա ամենակարևոր մարդը: Եվ դա, իհարկե, պապիկն էր:

Պապիկը վեր կացավ պարելու, բայց հետո նայեց Ալեքսին: «Արի, միացիր ինձ, Ալեքս», - կանչեց նա: Ալեքսը վեր թռավ ու պարեց պապիկի կողքին: Ապա մյուսները նույնպես պարեցին:

Պապը թեքվեց՝ գրկելու Ալեքսին: «Դու այնպես արեցիր, որ իմ օրը հատուկ լինի այսօր», - ասաց պապը: «Սա *կատարյալ* տարեդարձ էր»:

Երեկույթի ավարտից հետո Ալեքսը նայեց երկնքին: Սև թանձր ամպերը վերադարձել էին: Անձրև սկսեց տեղալ նրանց վրա: Բայց այս անգամ Ալեքսը չանհանգստացավ: Նա գիտեր, որ Երկնային Հայրն օգնել էր, որ տևական ժամանակ լավ եղանակ լիներ՝ պապիկի տարեդարձի համար:

«Շնորհակալություն լավ եղանակի համար», - աղոթեց Ալեքսը: «Եվ շնորհակալ եմ Քեզ, այսպիսի հրաշալի պապիկի համար»: ●